ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

02. 12. 2023 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 13-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2023-2024 ուսումնական տարվա հեռակա ուսուցման I կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. 2023-2024 ուստարվա առկա ուսուցման I կիսամյակի 2-րդ ընթացիկ ստուգումների, քննությունների և ստուգարքների ժամանակացույցների քննարկում և հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. Ֆակուլտետի՝ 2023-2024 ուստարվա հեռակա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հոգեբանություն», «Պատմություն» կրթական ծրագրերի ավարտական աշխատանքների թեմաների հաստատում (զեկուցողներ՝ **ամբիոնների վարիչներ, Կ. Պողոսյան**)
4. Ընթացիկ հարց.
   - Ֆակուլտետից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի կազմում ընդգրկվելիք 4 ներկայացուցչի ընտրության մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ 2023-2024 ուսումնական տարվա հեռակա ուսուցման I կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները, հաստատված ժամանակացույցի համաձայն, անցկացվելու են ս.թ. դեկտեմբերի 19-29-ն ընկած ժամանակահատվածում: Նախապես կազմվել են բոլոր ժամանակացույցները, դրանք ուղարկվել են մասնագիտական ամբիոններ՝ քննարկման նպատակով: Ելնելով արված առաջարկություններից՝ ժամանակացույցները ենթարկվել են որոշ փոփոխությունների և վերջնական տեսքով ներկայացվել են փոխտնօրենի հաստատմանը: Հաստատված

գրաֆիկները տեղադրվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պաշտոնական կայքում, իրազեկվել են ուսանողները և դասախոսները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուսումնական տարվա հեռակա ուսուցման I կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին զեկուցող Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի մասին ևս զեկուցեց Կ. Պողոսյանը և նշեց, որ 2023-2024 ուստարվա առկա ուսուցման I կիսամյակի 2-րդ ընթացիկ ստուգումները, քննությունները և ստուգարքները, հաստատված ժամանակացույցի համաձայն, կանցկացվեն 2023 թ. դեկտեմբերի 22-29-ն ընկած ժամանակահատվածում: Բոլոր գրաֆիկներն ուղարկվել են ամբիոններ, քննարկվել, և դրանցում իրականացվել են որոշ փոփոխություններ:

Վերափոխված ժամանակացույցները ներկայացված են ֆակուլտետի գիտխորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա անդամները հավանություն տվեցին ներկայացված ժամանակացույցներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստում հավանություն տալ 2023-2024 ուստարվա առկա ուսուցման I կիսամյակի 2-րդ ընթացիկ ստուգումների, քննությունների և ստուգարքների ժամանակացույցներին և դրանք ուղարկել փոխտնօրենի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ զեկուցողները նշեցին, որ 2023-2024 ուստարում ֆակուլտետում կան հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսեր՝ 3 կրթական ծրագրերով («Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հոգեբանություն», «Պատմություն»):

Ուսանողներին տրամադրվող ավարտական աշխատանքների թեմաները նախ քննարկվել են մասնագիտական երկու՝ Մանկավարժության և հոգեբանության, Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոններում, ենթարկվել են անհրաժեշտ շտկումների և փոփոխությունների, ստուգվել է դրանց համապատասխանությունը կրթական ծրագրերի վերջնարդյունքներին: Ապա թեմաները տրամադրվել են ուսանողներին և ներկայացվել ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ֆակուլտետի՝ 2023-2024 ուստարվա հեռակա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Հոգեբանություն», «Պատմություն» կրթական ծրագրերի ավարտական աշխատանքների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.

Ընթացիկ՝ 4-րդ հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի շրջաբերականի համաձայն՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի աշխատակարգի հաստատմամբ պայմանավորված՝ անհրաժեշտ էր մինչև 2023 թ. նոյեմբերի 23-ը կազմակերպել խորհրդի նոր անդամների ընտրություններ և ընտրված ներկայացուցիչներին տնօրենի հաստատմանը ներկայացնել (Հումանիտար գիտությունների ֆակուլտետից՝ 4 ներկայացուցիչ): Կազմակերպվել է ընտրություն, և ըստ քվեարկության արդյունքների՝ յուրաքանչյուր ամբիոնից ամենաշատ ձայներ հավաքած թեկնածուներից ընտրվել է ֆակուլտետի 4 ներկայացուցիչ՝ Նաթելլա Գրիգորյան (Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն), Քրիստինե Հարությունյան (Օտար լեզուների ամբիոն), Լիանա Հարությունյան (Մանկավարժության և հոգեբանության ամբիոն) և Հասմիկ Վանյան (Հայոց լեզվի և գրականության ամբիոն): Ֆակուլտետից ընտրված 4 ներկայացուցչի ցանկն ուղարկվել է տնօրենի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիտենտ Ա. Մարդանյանը, Վ. Պողոսյանը՝ ակնկալելով, որ ընտրված ներկայացուցիչներն ակտիվ մասնակցություն կունենան ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի աշխատանքներում:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի կազմում ընդգրկվելիք 4 ներկայացուցչի ընտրության մասին զեկուցող Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Հ. Վանյան